

«Տնտեսագիտության տեսություն» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

«Տնտեսագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտին շնորհվում է «Տնտեսագիտության մագիստրոս» որակավորում:

Ծրագրի տևողությունը 1.5 տարի է, դասապրոցներ նախատեսվում է իրականացնել շաբաթական երեք անգամ, երեկոյան ժամերին՝ 16:00-20:00-ը: Մասնագիտական դասընթացների ավարտից հետո մագիստրոսը փորձառություն պետք է անցնի պետական կառավարման մարմինների գերատեսչություններում և մասնավոր հատվածի տարբեր կազմակերպություններում:

Ծրագրի շրջանակներում որպես դասախոսներ ներգրավվել են հանրային ոլորտի և հետազոտական կենտրոնների փորձառու մասնագետներ: Անկալվում է նաև ՀՀ-ում միջազգային հետազոտական կենտրոնների հրավիրյալ դասախոսների ներգրավում, ինչպես նաև՝ ուսանողների մասնակցություն ոլորտի բազմաբնույթ միջոցառումներին:

Ուսման վճարը մեկ տարվա համար 700.000 ՀՀ դրամ է: Քանի որ ծրագրի տևողությունն ընդամենը 1.5 տարի է, ամբողջ ծրագրի տևողության արժեքը կազմում է 1 միլիոն 50 հազար ՀՀ դրամ:

Մասնագիտության նկարագիր

«Տնտեսագիտություն» մագիստրոսական ծրագրի նպատակն է հիմնարար մասնագիտական պատրաստվածությամբ մրցունակ մասնագետների ձևավորումը, որոնք ի լրումն տնտեսագետ-բակալավրի որակավորման մակարդակում ձեռք բերված գիտելիքների, հմտությունների և կարողությունների, պետք է կարողանան իրականացնել գիտահետազոտական, գիտամանկավարժական աշխատանքներ և իրենց մասնագիտության մեջ կատարելագործվելու համար ունենան անհրաժեշտ գիտելիքների պաշար: Այս նպատակի իրագործման համար կրթական ծրագրում դրվել են հետևյալ խնդիրները.

➤ Ուսումնառողների մոտ ձևավորել մասնագիտական հիմնարար գիտելիքներ՝ միտված տնտեսության տարբեր մակարդակներում և ոլորտներում գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը, համապատասխան կրթական հաստատություններում գիտամանկավարժական գործունեության իրականացմանը, ինչպես նաև ձևավորել հմտություններ՝ միտված նորարարական գործունեության իրականացմանը՝ տարբեր ոլորտների գիտելիքների սինթեզման և նոր գիտելիքներ գեներացնելու ճանապարհով:

➤ Բավարարել աշխատաշուկայի՝ տնտեսության տարբեր ճյուղերում գիտական հետազոտություններ, նորարարական գործունեություն իրականացնելու, տնտեսության տարբեր մակարդակներում տնտեսագիտական վերլուծություններ կատարելու, տնտեսական քաղաքականություն և տարբեր տնտեսական միավորների զարգացման ռազմավարություններ մշակելու, տնտեսական քաղաքականության արդյունավետության քանակական և որակական գնահատումներ իրականացնելու և տնտեսագիտական խորհրդատվություն տրամադրելու ունակություններով օժտված մասնագետների նկատմամբ պահանջարկը:

➤ Տնտեսագիտական հետազոտություններ իրականացնելիս ժամանակակից մաթեմատիկական և վիճակագրական գործիքակազմի կիրառման հմտություններով, նորարարական հմտություններով, մասնագիտական խնդիրների լուծման նպատակով ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաների կիրառման ունակություններով օժտված մասնագետների թողարկմամբ նպաստել տնտեսագիտության բնագավառի մասնագետների մասնագիտական ներուժի զարգացմանն ու վերարտադրությանը:

➤ Հետազոտության արդյունքում ստացված արդիական գաղափարները, մոտեցումները առաջարկելու, համակարգված ձևով ներկայացնելու, հիմնավորելու, ինչպես նաև՝ բարդ և անձանոթ աշխատանքային միջավայրում իրադրությունը կառավարելու, թիմի ռազմավարական նպատակների իրականացման համար պատասխանատվություն ստանձնելու ունակություններով օժտված մասնագետների ձևավորմամբ նպաստել շրջանավարտների՝ արագ փոփոխվող աշխատավայրի միջավայրի ինտեգրմանը և մասնագիտական առաջխաղացման ապահովմանը:

➤ Հետագա աշխատանքի ընթացքում, գիտության և տեխնիկայի զարգացմամբ պայմանավորված, ընդհանրական գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացման կարիքները օբյեկտիվ գնահատելու, ինչպես նաև մասնագիտական առարկայական ոլորտի փոփոխություններին մշտապես տեղեկացված լինելու գիտակցման հետևողական զարգացմամբ ուսումնառողների մոտ ձևավորել հետագա ինքնաուսուցման ունակություններ:

Աշխատանքի հնարավորություններ

«Տնտեսագիտության մագիստրոս» որակավորում ունեցող տնտեսագետների նկատմամբ աշխատաշուկայում առկա է մեծ պահանջարկ, քանի որ նրանք առանցքային դերակատարում ունեն տնտեսական գործունեության տարբեր բնագավառներում իրականացվող փորձագիտական, հետազոտական, վերլուծական բնույթի աշխատանքներում: Մասնավորապես՝ տնտեսական քաղաքականության մշակման, գնահատման, վերլուծության ու կանխատեսմանն առնչվող աշխատանքներում, մրցակցային միջավայրի, հնարավոր ռիսկերի և հետևանքների գնահատման, վերլուծության և մրցակցության կարգավորման քաղաքականության մշակման

աշխատանքներում, գնագոյացման մեխանիզմի ուսումնասիրության ու վերլուծության աշխատանքներում, ինչպես նաև՝ առանձին տեղական և միջազգային կազմակերպությունների ու պետական մարմինների կողմից մշակվող ռազմավարությունների ու ծրագրերի տնտեսական բաղադրիչի գնահատման, ռազմավարությունների հնարավոր արդյունքների ու փոփոխությունների կանխատեսման աշխատանքներում:

«Տնտեսագիտություն» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագիրը շրջանավարտին հնարավորություն է ընձեռում լրացուցիչ քննություններ հանձնելուց հետո ՀՊՏՀ-ում (այլ բուհերում) կրթությունը շարունակել ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի 8-րդ «գիտությունների թեկնածու» մակարդակում: Այդ մակարդակում ուսումնասիրությունն ավարտելուց և թեզը պաշտպանելուց հետո շրջանավարտներին կշնորհվի «տնտեսական գիտությունների թեկնածուի» որակավորում (գիտական աստիճան): Կրթական ծրագրի շրջանավարտը կարող է ստանալ նաև երկրորդ մագիստրոսական կրթություն՝ բարձրագույն կրթության այլ մասնագիտությամբ: